

Ելույթ

ԼՂՀ-ում ծառայող ժամկետային զինծառայողներին Պաշտպանության բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի հետ հանդիպման

30.10.2014 թ. Եղեգնաձոր

Մեծարգո պարոն նախարար, հարգելի հյուրեր, Վայոցձորցիներ, սիրելի
զինվորներ:

Միրով ողջունում և շնորհավորում եմ մեզ բոլորիս այս գեղեցիկ հանդիպման
արթիվ: Այսօր մենք հպարտ և շատ ուրախ ենք, որ Վայոց ձոր՝ իրոնց ծննդավայր
են ժամանել ԼՂՀ Պաշտպանության բանակում ծառայող իրենց կանոնադրական
պարտականությունները առավել բարեխղճորեն կատարող ժամկետային
զինծառայողները, Պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի
հրամանատար գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի գլխավորությամբ:

Հայկական ազգահին բանակը կազմավորվելով հայ ժողովրդի ճակատագրի
համար ամենաձանր ժամանակաշրջանում 1992 թ. հունվարի 28-ին անցել է ծանր
կորուստների ու փառավոր հաղթանակների ուղի: Բոլորը գիտեն, որ մեր երկրի
ներկա ազատությունն ու մեծ հաշվով խաղաղությունը մեզ ոչ ոք նվեր չի
սովել: Դրանք նվաճվել են մեր հերոս ազատամարտիկների արյան գնով, մենք դա
նվաճել ենք դաժանագույն պատերազմում՝ ազգովի և փորձություններից դուրս ենք
եկել պարզ ճակատով, և այդ ճակատը Հայոց բանակն է:

Հայկական բանակի կազմավորման տարեգրությունն ուղակիորեն կապվում է
Հայաստանի Հանրապետության անկախության Արցախի ազատագրման համար
մղված նվիրական պայքարի և դրա հաղթական արդյունքների հետ: Այժմ էլ երբ
մեր թշնամին դավադրաբար խախտում է մեր սահմանների անդորրը հանդես
գալիս ռազմատենչ հայտարարություններով, մեր բանակը արժանի հակահարված
է տալիս և լռեցնում հակառակորդին, շատ կարևոր է դառնում բանակի և
հասարակության միջև կապի ամրապնդումն զինծառայողների կյանքի
բարելավումն:

Իչպես նշել է ՀՀ ՊՆ նախարար Մեյրան Օհանյանը Հայրենիքի պաշտպանը միայն
զինվորն ու սպան չեն, հայրենիքի պաշտպան են աշակերտն ու ուսուցիչը,
դասախոսն ու ուսանողը, բանվորն ու հողագործը, նա ում համար հայրենիքն

արժեք է: Եվ այս հանդիսավոր պահին վստահորեն ասում եմ, որ վայոցձորցիներս նույնպես եղել ենք ու կանք որպես հայրենիքի պաշտպանության առաջամարտիկներ: Հայրենիքի ազատագրման պայքարում մեր հայրենակից 86 Վայոցձորցիներ իրենք կյանքի գնով իրենց մահկանացուն կնքեցին, շատերը դարձան կենդանի լեգենդներ, կարող եմ բերել շատ օրինակներ, սակայն կարծում եմ մեկն անունն էլ բավական է , ուստի կնշեմ միայն վայոցձորցի /Գլաձորցի/ Արման Կամոյի Հովաննիսյանին, որի մասին, կարծում, շատ բան ասել անհրաժեշտ չէ: Անունն արդեն ամեն ինչ ասում է:

Բանակային 4-րդ կորպուսի հրամանատար Գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանի անձնական նախաձեռնությամբ ու ոգևորությամբ մարզպետարանը, զինվորական կոմիսարիատները, հանրակրթական դպրոցներն ու համայնքները ծավալուն աշխատանքներ են տանում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության նրանց գիտելիքների ամրապնդման ու հայրենիքի նկատմամբ իրենց նվիրական պարտքը կատարելու գաղափարական պատրաստության ուղղությամբ: Բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հետ:

Դրա ապացույցն է այն, որ մեր մարզից բանակում ծառայող զինվորները միշտ էլ աչքի են ընկել իրենց պատշաճ ծառայությամբ և խոհեմությամբ: Ապրելով սահմանամերձ մարզում` մենք յուրաքանչյուր օր շնորհակալությամբ ենք հիշում մեր բանակի բոլոր զինվորներին, որոնք ապահովում են մեր ժողովրդի խաղաղ, ստեղծագործ և բնականոն գործունեությունը: Թող խաղաղությամբ բացվեն մեր բանակի բոլոր զինվորների առավոտները, ուժ և զորություն մեր բոլոր սպաներին, գեներալներին, հաջողություններ բանակի հզորացման գործին իրենց մասնակցությունը բերող բոլոր քաղաքացիներին: